ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1917 թ. փետրվարի 28— տեղի է ունենում Ռուսաստանի մեծ հեղափոխությունը։

1917 թ. մարտ— Թիֆլիս են ժամանում Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից նշանակված «Անդրկովկասյան հատուկ կոմիտեի» անդամները. նախագահ՝ Խառլամով, անդամներ՝ Մ. Բաբաջանյան, Չխենկելի, Ջաֆարով։

1917 թ. հոկտեմբեր— Գումարվում է հայոց ազգային խորհրդաժողովը, որը ընտրում է Հայոց Ազգային Կենտրոնական Խորհուրդ։ Վերջինիս առաջին գործը եղավ կազմակերպել հայկական զորաբանակ՝ զորավար Նազարբեկյանի հրամանատարությամբ։

1917 թ. հոկտեմբերի 25— Ձմեռային պալատը պաշարվում է, ձերբակալվում է Կերենսկու կողմից Պետերբուրգի շրջանի հրամանատար նշանակված զորավար Բագրատունին։ Դիմադրություն ցույց տալիս զոհվում է զինվորական նախարարի օգնական Իշխան Թումանովը։ Ձերբակալվում են նախարարները, իշխանությունը անցնում է բոլշևիկների ձեռքը։

1917 թ. նոյեմբերի 15— Ստեղծվում է «Անդրկովկասյան կոմիսարիատը», նախագահ՝ Գեգեչկորի, ազգային կազմը՝ երկու ռուս, երեք վրացի, երեք հայ, երեք թաթար։

1917 թ. նոյեմբերի 21— Սկսվում են հաշտության բանակցություններ Թուրքիայի հետ։

1917 թ. դեկտեմբերի 5— Երզնկայում կնքվում է զինադադար։

1918 թ. հունվարի 1— Թուրքական կողմը պահանջում է բանակցություններ անկախ Անդրկովկասի հետ։

1918 թ. հունվարի 15— Կոմիսարիատը հայտնում է, որ իր պատասխանը կտա երեք շաբաթ հետո։

1918 թ. հունվարի 30— Թուրքական բանակը իր մահմեդական բնակչության պաշտպանության համար, սկսում է արշավանքը։ Անդրկովկասյան կոմիսարիատի զինվորական իշխանությունը միտումնավոր դանդաղկոտություն է ցուցաբերում, վրացիները և թաթարները պակաս և ավելի չափով ծառայում են հակահայկական այսինքն՝ ռազմաճակատին հակառակ նպատակների։ Կովկասյան ճակատի պաշտպանության ողջ ծանրությունը ընկնում է Հայոց Ազգային Խորհրդի և հայկական զորաբանակի ուսերին։

1918 թ. փետրվարի 16— Անդրկովկասի Սեյմը ընտրում է հաշտության բանակցությունների պատվիրակություն՝ Չխենկելիի ղեկավարությամբ։

1918 թ. փետրվարի 17— Անդրկովկասյան Սեյմի նախագահ Չխեիձեն և կառավարության նախագահ Գեգեչկորին հանձնարարում է աշխարհի բոլոր կառավարություններին, որ Անդրկովկասը հավանություն չի տալիս Բրեստ—Լիտովսկի բանակցություններին։

1918 թ. փետրվարի 23— ապրիլի 1— Հաշտության բանակցությունները Տրապիզոնում։ Այդ ընթացքում Թուրքերը անդադար շարունակում են առաջ շարժվել Կովկասյան ճակատի վրա։

1918 թ. մարտի 3— Կնքվում է Բրեստ—Լիտովսկի դաշնագիրը։

1918 թ. մարտի 23— Թուրքերը գրավում են Սարիղամիշը։

1918 թ. ապրիլի 1— Անդրկովկասյան Սեյմի որոշմամբ պատվիրակությունը վերադառնում է Թիֆլիս։ Թուրք-անդրկովկասյան պատերազմը դառնում է անխուսափելի։

1918 թ. ապրիլի 2— Վրացիները Բաթումը հանձնում են գրեթե առանց կռվի։ Թուրք-անդրկովկասյան պատերազմը վերածվում է Թուրք-հայկական պատերազմի։

1918 թ. ապրիլի 5, 6— Հայոց Ազգային Խորհուրդը Ալեքսանդրապոլում հրավիրում է խորհրդակցություն և որոշում շարունակել դիմադրությունը։

1918 թ. ապրիլի 9— Անդրկովկասը հայտարարվում է իր անջատումը Ռուսաստանից և հռչակում անկախություն։

1918 թ. ապրիլի 13— Գեգեչկորիի կառավարությանը փոխարինում է Չխենկելիի կառավարությունը։ Վերջինս մինչ այդ ապրիլի 10-ին կարգադրում է թողնել Կարսը։

1918 թ. ապրիլի 15— Թուրքերը մտնում են Կարս։

1918 թ. մայիսի 11— Սկսվում են Բաթումի հաշտության բանակցությունները Թուրքիայի և Անդրկովկասի միջև՝ Կովկասի և Դաղստանի ներկայացուցիչների մասնակցությամբ։

1918 թ. մայիսի 15— Թուրքերը գրավում են Ալեքսանդրապոլը։

1918 թ. մայիսի 24—29-ը— Տեղի է ունենում Սարդարապատի ճակատամարտը։

1918 թ. մայիսի 25—29-ը— Տեղի է ունենում Ղարաքիլիսայի ճակատամարտը։

1918 թ. մայիսի 26— Վրաստանը հռչակում է իր անկախությունը։ Պատվիրակութ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յունը վերադառնում է Թիֆլիս։

1918 թ. մայիսի 28— Ցերեկվա ժամը 12-ին Հայոց Ազգային Խորհուրդը ընդունում է պատմական բանաձև և հանդես գալիս Հայաստանի անկախության հայտարարությամբ։ Նույն օրը երեկոյան հայկական պատվիրակությունը մեկնում է Բաթում՝ շարունակելու բանակցությունները Թուրքերի հետ։

1918 թ. հունիսի 4— Կնքվում է Բաթումի հաշտության պայմանագիրը, որով Թուրքերը ճանաչում են անկախ Հայաստանի պետությունը։

1918 թ. հունիսի 6— Թիֆլիսում Հայոց Ազգային Խորհուրդը (նախագահ՝ Ա. Ահարոնյան) ընտրում է Հայաստանի կառավարություն՝ Հ. Քաջազնունու վարչապետությամբ։ Մինչև վերջիններիս Երևան գալը (հունիսի վերջին) Հայաստանը կառավարվում է Երևանի ազգային խորհրդի (նախագահ՝ Արամ Մանուկյան) և բանակի (ընդհանուր հրամանատար Դրաստամատ (Դրո) Կանայան) կողմից։

1918 թ. դեկտեմբեր— Տեղի է ունենում հայ-վրացական պատերազմ, միաժամանակ կառավարական մակարդակով բանակցություններ՝ սահմանների ճշգրտման շուրջ։

1919 թ. փետրվար— Քաջազնունու գլխավորությամբ հայոց պատվիրակությունը մեկնում է ԱՄՆ։ Վարչապետի տեղապահությունը վստահվում է Ալ. Խատիսյանին։

1919 թ. փետրվար—1920 թ. մայիս— Կառավարությունը արմատական բարեփոխումների է ենթարկում Հայաստանի ներքին կյանքը, ստեղծվում է ազատ մամուլ, երդվյալների դատարան, ազատ քաղաքական կազմակերպություններ, գյուղացիական ու քաղաքային ազատ ինքնավարություններ, սկսում է գործել հատակ տրնտեսական համակարգ...

1919 թ. փետրվար— Երևանում տեղի է ունենում արևմտահայերի 2-րդ համագումարը, որը Արևմտյան Հայաստանը հռչակում է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը։

1919 թ. մարտ— Հայկական զորքերը գրավում են Կարսը, Սարիղամիշը, Մերդենեկը, Արդահանը։

1919 թ. մայիս— Հայկական զորքերը մտնում են Նախիջևան։

1919 թ. մայիսի 28— Հայաստանի կառավարությունը հրապարակում է արևմտահայերի 2-րդ համագումարի որոշումից բխող հռչակագիր։